ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 դեկտեմբերի 2022 թվականի N 1980-Ա

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՆՎԻՐԱԲԵՐՈՒԹՅԱՄԲ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ Մ Ա Ս Ի Ն

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 605-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 65-րդ հոդվածի 6-րդ մասով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության փոխվարչապետի 2022 թվականի դեկտեմբերի 7-ի N 875-Ա որոշումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Համաձայնություն տալ «Հայաստանի մանուկներ» բարեգործական հիմնադրամի կողմից, բարեգործական որակված «Համայնքային զարգացում» ծրագրի իրականացման նպատակով, Արմավիրի մարզի Արմավիր համայնքի վարչական սահմաններում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող 88.0637 հեկտար մակերեսով հողամասերը՝ համաձայն N 1 հավելվածի «Հայաստանի մանուկներ» բարեգործական հիմնադրամին նվիրաբերությամբ տրամադրելուն:

2. Հաստատել սույն որոշման 1-ին կետով սահմանված «Համայնքային զարգացում» ծրագրի իրականացման համար հողամասերն անհատույց սեփականության իրավունքով՝ նվիրաբերությամբ տրամադրելու գործարքների հիմնական պայմանները՝ համաձայն N 2 հավելվածի:

3. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետին՝ մինչև 2028 թվականի դեկտեմբերի 30-ը բարեգործական որակված ծրագիրը չիրականացնելու դեպքում Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարին սահմանված կարգով ներկայացնել սույն որոշումն ուժը կորցրած ճանաչելու վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծ՝ նախապես Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի ղեկավարին առաջարկելով լուծել ներդրումային ծրագիր իրականացնող ընկերության հետ կնքված պայմանագիրը:

4. Առաջարկել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի ղեկավարին՝

1) սույն որոշման 1-ին կետում նշված հողամասերի նվիրաբերության պայմանագրերի կնքումն իրականացնել հողամասերի՝ ըստ անհրաժեշտության նպատակային նշանակությունները փոփոխելուց հետո.

2) նվիրաբերության պայմանագրերում նախատեսել դրույթ, համաձայն որի՝ ծրագիրը սահմանված ժամկետում չիրականացնելու դեպքում հողամասերը և դրանց վրա առկա անշարժ գույքերը սեփականության իրավունքով անցնում են նվիրաբերող համայնքին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

16.12.2022
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ